ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից տնտեսության հրամայականներից է թվային փոխակերպումը, որը միտված է ոչ միայն բարելավել ձեռնարկությունների գործառնական արդյունավետությունը, այլև հաճախորդների փորձառությունը և կառավարման համակարգերը: Ֆինանսական համակարգի էական մաս կազմող բանկային համակարգի պարագայում տեխնոլոգիաների ներթափանցումն արտահայտվում է հաճախորդներին մատուցվող ծառայություններում և բանկային հետգործառնական համակարգերում տեխնոլոգիական հարստացմամբ՝ հանգեցնելով ֆինտեխ լուծումների զարգացմանը: Միևնույն ժամանակ, ֆինանսական համակարգ են մուտք գործում տեխնոլոգիական հսկաները, որոնք ստացել են բիգտեխ անվանումը՝ հավակնելով գրավել բանկային համակարգի շահութաբերության մի զգալի մաս: Շուկայի տեխնոլոգիական զարգացումներից հետ չմնալու և մրցակցային դիրքը չզիջելու համար բանկերի համար թվային փոխակերպումը դարձել է իրենց բիզնեսի նորօրյա հրամայականներից մեկը:

ՀՀ բանկային համակարգում վերջին տարիներին դիտված բարձր շահութաբերությունը էական նախադրյալներ է ստեղծում թվային փոխակերպման ոլորտում ներդրումներ իրականացնելու համար, որոնք սովորաբար ընդգրկում են ողջ կազմակերպությունը և ներառում են կազմակերպական մշակույթի փոփոխություն:

Թվային փոխակերպում իրականացնելու լրացուցիչ բարդությունը բանկային համակարգի մասնակիցների համար պայմանավորված է բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների կազմակերպական մշակույթների տարբերություններով: Առանց թերագնահատելու թվային փոխակերպմանը հատկացվող ռեսուրսների կարևորությունը՝ միաժամանակ կարևորվում է բանկի թվային փոխակերպման գործընթացներում և փոփոխություններն առաջնորդելու հարցում ճկունությունը, կառավարչական հմտությունները և աշխատակիցների մոտիվացիան:

Հայաստանի Հանրապետությունը ևս ակտիվորեն ներգրավված է թվային փոխակերպման գործընթացներում և դեռևս 2021 թ.-ին Կառավարության որոշմամբ հաստատել է իր թվայնացման ռազմավարությունը, որի իրականացումը վերջին տարիներին համակարգում է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունը: ՀՀ թվայնացման գործընթացներում առանցքային դեր ունեն ՀՀ բանկերը:

Հաշվի առնելով թվային փոխակերպման մասշտաբայնությամբ պայմանավորված ներդրումների ծավալը և դրանք կառավարելու բարդությունները՝ նշված ոլորտն արժանի է կարգավորող և վերահսկող մարմնի ուշադրությանը: Վերահսկողական պրակտիկայում առաջատար փորձով հայտնի մարմիններից Եվրոպական կենտրոնական բանկը վերջին տարիներին զգալի աշխատանքներ է իրականացրել համարժեք վերահսկողություն ապահովելու ուղղությամբ: Այսպիսով, վերոնշյալ հանգամանքները հիմնավորում են ընտրված թեմայի գիտական և գործնական արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն է գիտականորեն հիմնավորված միջազգային լավագույն փորձի ներդրմամբ բարելավել ՀՀ ԿԲ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական համակարգը՝ հաշվի առնելով ՀՀ ԿԲ և ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունները: Այս նպատակին

հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թվային փոխակերպման հասկացությունը վերահսկողական գնահատումների տեսանկյունից, մասնավորապես՝ թվային փոխակերպման շարժիչ ուժերը, մակարդակները (տարատեսակները), դրսևորումները բանկային համակարգում, ապագա զարգացումների հավանական սցենարները և դրանցից բխող ռիսկերը, ինչպես նաև դրա կառավարումը կենտրոնական բանկերի կողմից,
- մշակել գիտականորեն հիմնավորված, բանկերի թվային փոխակերպման կառավարման վերահսկողական գնահատման մոդել՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, գրականության ուսումնասիրության և գիտական մեթոդաբանական քայլերի վրա,
- ուսումնասիրել թվային փոխակերպման արդի գործընթացները ՀՀ-ում և գնահատել դրանց ազդեցությունը բանկային համակարգի վրա՝ բանկային համակարգի տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ պատկերացում ձևավորելու համար,
- խմբավորել ՀՀ առևտրային բանկերն ըստ թվային փոխակերպման շարժիչ ուժերի նկատմամբ իրենց զգայունության և հավանական ազդեցության՝ նպաստելով վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը,
- ուսումնասիրել ՀՀ բանկային կարգավորման և վերահսկողության ընթացիկ պրակտիկան բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման կառավարման համատեքստում՝ մշակված մոդելի ներդրմանը խոչընդոտող խնդիրները վեր հանելու համար,
- մշակել առաջարկներ ՀՀ ԿԲ-ի կողմից բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման գնահատման վերահսկողական համակարգի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև առաջարկել բացահայտված խնդիրների լուծման ուղիներ:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսության շրջանակում կատարված հետազոտությունները թույլ են տվել հասնել մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

1. Մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդելը՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի և թեմային առնչվող գրականության ուսումնասիրության վրա, և կիրառելով կառավարման գիտության մեջ տեսության մշակման մեթոդաբանություն:
2. Գնահատվել է ՀՀ բանկային համակարգի վրա թվային փոխակերպման գործընթացների ազդեցությունը՝ հիմնվելով թեմատիկ վերլուծության մեթոդաբանության և հիմնավորված տեսության մեթոդաբանական տարրերի վրա:
3. Մշակվել է բանկերի խմբավորման նոր մեթոդ, որի հիմնական տարբերությունը գոյություն ունեցող այլ մեթոդներից կայանում է թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունությունն արտացոլող երկու նոր ֆինանսական գործակիցների ներառման մեջ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով ապագա ֆինտեխ զարգացումների տարբեր սցենարներ:
4. Մշակված նոր մեթոդաբանությամբ ՀՀ բանկերը խմբավորվել են ըստ թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունության և դրանց հավանական ազդեցության, որը կարող է օգտակար լինել վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից:
5. Մշակվել են ՀՀ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնց ներդրման արդյունքում ակնկալվում է բանկերի ռազմավարական ռիսկի կառավարման բարելավում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտը և առարկան,

նպատակը և խնդիրները, տեսա-մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ ***«Բանկային համակարգի թվային փոխակերպման գործընթացների ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը»*** գլխում խորապես ուսումնասիրվում է ֆինանսներում թվային փոխակերպմանն առնչվող ակադեմիական գրականությունը, մասնավորապես՝ թվային փոխակերպման շարժիչ ուժերը, տեսակները, դրսևորումները բանկային համակարգում, ինչպես նաև բանկային վերահսկողության գործնական մոտեցումները տվյալ թեմայի շրջանակում: Գլխի վերջում բանկերի թվային փոխակերպման առաջատար փորձի հիման վրա գիտական մեթոդների կիրառմամբ մշակվում է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդելը, որը էականորեն լրացնում և կատարելագործում է նախորդող գնահատման համակարգը:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման հիմնախնդիրները»*** գլխում գնահատվել է ՀՀ-ում թվային փոխակերպման արդի գործընթացների ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի զարգացումների վրա, իրականացվել է ՀՀ բանկերի խմբավորում առաջարկված նոր մեթոդով՝ միտված վերահսկողական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավմանը, ինչպես նաև իրականացվել է ՀՀ-ում բանկային կարգավորման ու ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության գործող պրակտիկայի համադրում մշակված ԹՓՎԳ մոդելի բաղադրիչների հետ ՀՀ ԿԲ ռազմավարական տեսլականի ներքո:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման բարելավման ուղիները»** գլխում ձևակերպվել են բանկերի բիզնես մոդելի ԹՓ վերահսկողական գնահատման համակարգի բարելավմանը միտված առաջարկությունները՝ հիմնվելով

ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքների վրա: Մասնավորապես, առաջարկները վերաբերում են ֆինտեխ մրցակցությանը բանկերի դիմագրավելու կարողության և թվային փոխակերպման ներդրումների իրագործման կառավարչական արդյունավետության բարձրացմանը:

«Եզրակացություններ» բաժինն ամփոփում է ատենախոսության հիմնական դրույթները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Էջ 71-ում հեղինակի կողմից նշվում է, որ ՀՀ բանկերի կողմից պարբերաբար հրապարակվող թափուր հաստիքների գործառույթների պահանջներից կարելի է ենթադրել, որ մի շարք բանկեր հաստատուն քայլերով ներդնում են մեքենայական ուսուցման հիմքով համակարգեր՝ մասնավորապես վարկային ռիսկի մոդելների գնահատման մեջ: Այնուամենայնիվ, դեռևս ակնհայտ չեն ՀՀ բանկերի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարում մեքենայական ուսուցման և առհասարակ ամպային տեխնոլոգիաների կիրառման դեպքերը և օգուտները:

Նման մեկնաբանությունը որոշակի հիմնավորման կարիք ունի, քանի որ բանկերը նեղ մասնագիտական հմտությունները ուսուցանում են հենց աշխատատեղերում, ելնելով յուրաքանչյուր բանկի գործունեության և ծրագրային ապահովման առանձնահատկություններից և բանկերի կողմից թափուր հաստիքների գործառույթների ներկայացումը , հիմնականում ընդհանրական բնույթ է կրում և ուղղված է հնարավոր թեկնածուների կողմից իրենց ներուժի ճիշտ գնահատմանը: Ինչ

վերաբերում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարում մեքենայական ուսուցման համակարգերի բացակայությանը, պետք է նշել, որ սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ նման տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը հիմնվում է բավարար չափով հագեցած և որակյալ տվյալների բազաների առկայության վրա, ինչը ներկայումս դեռևս լիարժեք ապահովված չէ: Այլ կերպ ասած նշված տեխնոլոգիաների լայնածավալ և արդյունավետ ներդնումը աստիճանաբար հնարավոր կդառնա տվյալների հավաքագրման, մշակման և վիճակագրական բավարար բազայի ձևավորման պայմաններում և պայմանավորված չէ դրանց կիրառման օգուտի բացակայությամբ:

2. Էջ 108-ում հեղինակը նշում է, որ Կանոնակարգ 3-ի թիվ 20 հաշվետվությունը ներառում է ինտերնետ և մոբայլ բանկինգին առնչվող որոշ տարրեր: Տվյալ հաշվետվության տարրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ակնհայտորեն ժամանակավրեպ է, քանի որ այդտեղ ներառված որոշ տարրերի, օրինակ՝ «Էս-Էմ-Էս բանկինգ», «Հեռախոս-բանկինգ», այլևս կիրառելի չեն: Ի հակադրումն նշվածի պետք է արձանագրել, որ հեռախոսային բանկինգը դեռևս կիրառվում է որոշ բանկերի կողմից, թեև սեգմենտավորված ձևով:

3. Էջ 110-ում հեղինակը, imID» թվային նույնականացման ծառայություն մատուցող ընկերության հիմնադրումը ներկայացնում է որպես թվային փոխակերպման հաջողության հիմնական գործոններից, սակայն այն իրենից ներկայացնում է նույնականացման, էլեկտրոնային թվային ստորագրության ծառայություններ մատուցող կառույց: Բանկերում թվային փոխակերպման գործընթացը ընթանում էր անգամ մինչ տվյալ ընկերության հիմնադրումը և կապված չէր նույնականացման գործառույթի ավտոմատացման հետ:

4. Աշխատանքը կշահեր, եթե դրանում ներկայացված լինեին նաև թվային փոխակերպման լավագույն օրինակներ հանդիսացող միջազգային նեոբանկերը, որոնց վերափոխման ժամանակագրությամբ հնարավոր կլիներ հասկանալ, թե

դասական բանկային համակարգի սահուն վերափոխման համար ինչպիսի նախադրյալներ են պետք և ինչպիսի վերահսկողական մեխանիզմների ներդնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը և հետազոտության ընթացքում ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամփոփ, գիտական պատշաճ մակարդակով հետազոտություն է, որի արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման բարելավմանը: Ատենախոսը դրսևորել է ոլորտի խորքային մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ունակություններ, ինչի մասին են վկայում ատենախոսությունում օգտագործված գրականության ցանկը, կիրառված գիտական մեթոդները և ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 8 գիտական հոդվածներում, որոնցից մեկը՝ SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ն. Ս. ԲԱԲԱՅԱՆ**

ՆՈՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲԱՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝

Անձնակազմի կառավարման
Վարչության պետ **Է. Ա. ԽԱՆԵՅԱՆ**

« 4 » ՀՈՒՆԻՍԻ 2026թ.